ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Ժաննա Անդրեասյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

2022թ. հոկտեմբերի 23-27

4. Հրավիրող կողմը

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «**Armenia's Promise Forum**» կրթական համաժողովին

6. Քննարկված թեմաները

- Ի՞նչ է անհրաժեշտ աշակերտներին Հայաստանի և Արցախի ապագան կերտելու գործում

Պանելային քննարկումներ

- Կրթության ապագան
- Նորարարության զարգացումը կրթության միջոցով:
- Կրթության բարելավման մոդելների ստեղծում:
- Համակարգային փոփոխությունների խթանում առաջնորդության միջոցով:
- Հնարավորությունների հասանելիության խթանում Հայաստանի գյուղերում ուսանողների համար:
- Նորարարությունների խթանումը Հայաստանի գյուղերում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում ԿԳՄՍ նախարարի տեղակալը ելույթ է ունեցել բացման խոսքով՝ կարևորելով կողմերի համագործակցությունը: Ելույթի ժամանակ անդրադարձ է կատարվել ոլորտի մարտահրավերներին և համաժողովի առանցքային հիմնահարցին՝ «Ի՞նչ է անհրաժեշտ աշակերտներին Հայաստանի և Արցախի ապագան կերտելու գործում», մասնավորապես ընդգծելով «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը». նշվել է, որ ռազմավարության շրջանակներում Կառավարությունը փորձում է ապահովել որակյալ և ներառական

կրթական ծառայությունների հասանելիությունը Հայաստանի յուրաքանչյուր համայնքի, յուրաքանչյուր անհատի համար ողջ կյանքի ընթացքում հատկապես նախադպրոցական կրթության ծառայությունները՝ առաջարկելով ժամանակակից տեխնոլոգիաներով և լաբորատորիաներով հագեցած ճկուն և անվտանգ միջավայրեր, որտեղ կարևոր է ոչ միայն գիտելիքի, այլև հմտությունների, արժեքների և վերաբերմունքի տրամադրման ձևաչափը: Ելույթի ընթացքում խոսվել է կրթության բավարար ֆինանսավորման ապահովման, ուսուցիչների ներգրավման և ուսուցչի մասնագիտությունը երիտասարդների համար գրավիչ դարձնելու հիմնահարցերի մասին, ինչպես նաև պետության կողմից հանրակրթության ոլորտում նախաձեռնված բարեփոխումների և իրականացվող ծրագրերի մասին: Համաժողովի ընթացքում ԿԳՄՍ նախարարի տեղակալը մասնակցել է «Կրթության ապագան» պանելային քննարկմանը:

Համաժողովի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի UCLA կրթության և տեղեկատվական հետազոտությունների դպրոցի ուսուցիչների պատրաստման ֆակուլտետում, որտեղ քննարկվել է դպրոցներ ուսուցիչների գործուղման ծրագրի արդյունավետության հետազոտության կազմակերպման հարցերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Համաժողովի արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը «Դասավանդի'ր, Հայաստան» կրթական հիմնադրամի և (UCLA) կրթության և տեղեկատվական հետազոտությունների դպրոցի հետ ուսուցիչների գործուղման՝ առաջնորդ ուսուցիչների՝ կրթական արդյունքի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

31.10.2022